ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

05.10.2025

Սիրելի՛ ուսուցիչներ

Սրտանց շնորհավորում եմ մասնագիտական տոնի առիթով և անկեղծ երախտագիտություն հայտնում ձեր ամենօրյա աշխատանքի համար:

Ուսուցչի մասնագիտական տաղանդն ու անհատականությունն են մեծապես որոշում, թե ինչպես կմեծանան երեխաները, ինչ բարոյական արժեքներ կպահպանեն և ինչ ապագա կկառուցեն մեզ համար:

Այս մասնագիտությունն ընտրելով՝ դուք որոշել եք նվիրվել ամենապատասխանատու գործին՝ կրթել ու դաստիարակել սերունդներ, ձևավորել նրանց աշխարհայացքը, պարտքի զգացումը հայրենիքի նկատմամբ, նաև սեր ու հավատ սերմանել գիտելիքի և արդարության, իրենց սեփական ուժերի հանդեպ: Այս ամենը պահանջում է ոչ միայն մասնագիտական հմտություններ, այլև անսահման համբերություն, հավատարմություն մասնագիտությանը, նաև սեր՝ երեխաների, մտահոգություն հայրենիքի վաղվա օրվա հանդեպ: Շնորհակալ եմ տվյալ ճանապարհն ընտրելու և այս բարդ առաքելությունն իրագործելու համար:

Թո՛ղ ձեր քրտնաջան աշխատանքը միշտ լինի գնահատված, հարգված և զգաք թե՛ աշակերտների ու նրանց ծնողների, թե՛ ողջ հասարակության սերն ու հատուկ ուշադրությունը ձեր հանդեպ:

Ամեն դպրոցական օր դրսևորած ձեր համբերատարությունը, նվիրվածությունը և պատասխանատվությունն անգնահատելի են, իսկ աշակերտների՝ ապագայում կերտած հաջողությունները, բնականաբար, ձեզ համար ամենամեծ պարգևն են:

Օրն առիթ է նաև հպարտությամբ ամփոփելու նախորդ ուստարում սյունեցի աշակերտների և ուսուցիչների հաջողությունները տարբեր հանրապետական և միջազգային մրցույթներում, օլիմպիադաներում, մշակութային և գիտական նախագծերում: Այս նվաճումները ձեր գիտելիքների, մասնագիտական ճիշտ աշխատանքի ուղղակի արդյունքն են: Յուրաքանչյուր հաղթողի կողքին ուսուցիչն է, որը կրթել, առաջնորդել, աջակցել և ոգեշնչել է աշակերտին:

Ցանկանում եմ, որ միշտ բավարար ոգեշնչում և ուժ ունենաք ձեր աշխատանքը նույն եռանդով շարունակելու համար: Չէ՞ որ ձեր անդուլ ջանքերով ամրացնում եք այն հիմքը, որի վրա կանգնած է մեր մարզի, մեր հայրենիքի ապագան: Երկրի նվաճումներն ու առաջընթացը յուրաքանչյուր ոլորտում սկսվում են դպրոցում՝ ձեր տված գիտելիքով, ձեր խոսքերով ու խրախուսանքով: Ուսուցչի նվիրվածությունը, ճիշտ ուղղորդումը հատկապես կարևոր է այսօր, երբ մեր հասարակությունը բախվում է մարտահրավերների, որոնք պահանջում են ամուր ոգի, միասնություն և ազգային արժեքների վրա հիմնված կրթություն: Դուք եք դաստիարակում քաղաքացիներ, որոնք կշարունակեն մեր պետությունը կառուցելու և պաշտպանելու առաքելությունը:

Բոլորիդ առողջություն, մասնագիտական հաջողություններ և խաղաղ երկրում արարելու հնարավորություն եմ մաղթում: